ԳԼՈՒԽ ԾԷ.

Եթէ գուցէ զի նախարարութիւն Հայաստանեաց լինիցի ժառանգաւոր նախարարն հանդերձ երիս որդւովքն ունին վարձս պաշտօնի իւրեանց որպէս գլուխ 278. հատոր յօրէնս, Մնացորդ տեղակալ ժառանգորդին հանդերձ այլ որդւովք, յաւելի քանթէ երիս պաշտօնեայ որդիքս հանդերձ դստերօք և տիրուհիւ նախարարին գտցեն տարեկան ռոճիկն 'ի տանէն Հայոց այսպէս։

Ժառանգորդ որդին ամենայն մի ամսէն դահեկանս . . . . . 2000։

Մնացորդ որդիքն ամենայն մի ամսէն. 1000։

Տիրուհին նախարարին ամենայն մի ամսէն. . . . . 1000։

Դստերաց նախարարին մինչև ժամ ամուսնանալոյ, քանի դուստր որ իցէ մի ֆի մի դստերն մի ամսէն . . . 500.

Օրինակ պաշտօն նամակի խորհրդակցութեան ընդ ծածուկ խորհրդարանին նախարարին։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին գուգրաց հայոց և թուղթ փոխանորդութեան նոցայ առ քեզ Տեառն Յարութիւն 'ի քաղաքէն լոռէ, և 'ի վերայ երդման քոյ հաստատելով հաւատն քոյ տուաք քեզ նամակ